ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Միհրան Խաչատրյան, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

(կետն ուժը կորցրել է 23.03.23 N 326-Ն)

Գործուղման վայրը և ժամկետները.

2025 թվականի ապրիլի 2-ից 5-ը, Ամստերդամ, Նիդերլանդներ

Հրավիրող կողմը.

Միացյալ Ավիացիոն Իշխանություններ (JAA) ուսումնական կազմակերպություն

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել ԵԿԱԿ անդամ երկրների քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրենների և ավիացիոն իշխանությունների վերապատրաստման բաժինների ղեկավարների 6-րդ բարձր մակարդակի աշխատաժողովին (HLT/6), որը կազմակերպվել էր JAA ուսումնական կենտրոնի կողմից:

Քննարկված թեմաները.

Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

Քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրեններին ներկայացվեցին ավիացիոն կառույցների ռիսկերի գնահատման գործընթացները, ինչպես նաև դրանց վերաբերվող առկա մարտահրավերներն ու պահանջները: Նշված համատեքստում տարբեր երկրների քաղաքացիական ավիացիայի իշխանությունների գլխավոր տնօրենները կիսվեցին իրենց փորձով և ներկայացրեցին տարբեր երկրների մոտեցումները: Մասնակից երկրների մեծամասնությունը նշեց նույն խնդիրների

առկայության մասին. որակավորված մասնագետների սղությունը և ոչ բավարար ֆինանսավորումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի ընթացքում Քաղաքացիական ավիացիոն իշխանությունների ղեկավարները քննարկեցին վերապատրաստումների միասնական ծրագրերի մշակման անհրաժեշտությունը և դրա առավելությունը ԵԿԱԿ անդամ երկրների համար: Քննարկվեց նաև ռիսկերի գնահատման ոլորտում առավել հաճախակի փոխգործակցության հարցը, որը թույլ կտա երկրներին ամրապնդել ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու հմտությունները:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի շրջանակներում ստորագրվեց Վերապատրաստումների մատուցման վերաբերյալ պայմանագիր JAA ուսումնական կենտրոնի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի միջև, որի արդյունքում Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնագետների վերապատրաստումները JAA ուսումնական կենտրոնում կիրականացվեն 10 տոկոս զեղչով: Ինչպես նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց իրականացնել խմբային դասընթացներ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում, որը հնարավորություն կտա խնայել բավականաչափ ֆինանսական միջոցներ:

Անհրաժեշտության դեպքում JAA ուսումնական կենտրոնի մասնագետները կայցելեն Քաղաքացիական ավիացիայի կոմիտե՝ գնահատելու վերապատրաստման կարիքները, երկկողմ համագործակցության ուղիները, ինչպես նաև համատեղ ուսումնական ծրագրերի մշակումը:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում առաջարկներ հնչեցին մասնակից երկրների ավիացիոն կառույցների ռիսկերի գնահատման գործընթացների վերաբերյալ կազմակերպել

առավել հաճախ քննարկումներ, որի ժամանակ հնարավոր կլինի գնահատել առկա խնդիրները և մշակել միասնական որոշումներ, որոնք կհամապատասխանեն միջազգային ստանդարտներին:

Ստորագրությունը, ամսաթիվը:

07.04.2025